ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

HEAD OF LOGISTICS SUPPORT
DEPARTMENT OF MINISRTY OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ДЕПАРТАМЕНТА
МАТЕРИАЛЬНО- ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНИСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email :depart@mil.am
Հեռ. (+37410) 29-45-45
Ֆաքս. (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багреванд 5,
Email: depart@mil.am
Tel.Тел. (+37410) 29-45-495
Fax.Факс. (+37410) 29-46-13

№ ԴՄՄ/3210
"25" 09 2017թ.

«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ (ՀՎՀՀ 05528443) տնօրեն

Ա. ՎԱՐՈՍՅԱՆԻՆ

հասցե՝ ՀՀ, ք.Մարալիկ, Գագարինի 29

էլ. հասցե՝ hasmikjan61@mail.ru

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության և «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ միջև 06.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/52-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր)՝ Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. 2-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 15 հատ միս կախելու կանգնակներ, որոնք 11.09.2017թ. դրությամբ չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. սեպտեմբերի 20-ին միս կախելու կանգնակներ ապրանքատեսակի մասով միակողմանի լուծել է 06.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/52-2 գնման պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՕԼԱՆԴԱ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 3 348 819 (երեք միլիոն երեք հարյուր քառասունութ հազար ութ հարյուր տասնինը) ՀՀ դրամ՝ որից 3 321 909 (երեք միլիոն երեք հարյուր քսանմեկ հազար իննը հարյուր ինը) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը) և 26 910 (քսանվեց հազար իննը հարյուր տաս) ՀՀ դրամը որպես տույժ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 7.2 կետի համաձայն):

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ